ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հոկտեմբերի 2015թ. թիվ 309-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունվարի 23-ի թիվ 30-Ա հրամանով հաստատված պլան-ժամանակացույցի 7-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 24.12.2015թ. թիվ 477-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2015թ. նոյեմբեր ամսվա ընթացքում Լոռու մարզում Վանաձորի տիկնիկային թատրոնի կողմից «Հրդեհաշիջման կազմակերպումն ու իրականացումը մշակութահանդիսարանային օբյեկտում», «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Հիվանդների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում», «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Ստեփանավանի էլ. ցանցի կողմից «Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում», «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից «Ջրամատակարարման համակարգում վթարի դեպքում հետախուզության և վթարավերականգողական աշխատանքների իրականացում» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի Թումանյանի ՏՏ կողմից «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմաներով անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

2. Ուսումնավարժությունների կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով սահմանել ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:

3. Ուսումնավարժությունների ղեկավարներ նշանակել համապատասխան կազմակերպությունների ղեկավարներին:

4. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Սույն որոշումը տրամադրել վերը նշված կազմակերպությունների ղեկավարներին, նրանց ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն՝ հատուկ տակտիկական ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 9
ք.Վանաձոր